

XVII ԴԱՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՄԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՍՄԻԿ ՍԱՀԱԿՑԱՆ

XVII դարի հայկական գրապատմական հուշարձանների մեջ իրենց բընույթով ուշագրավ են նաև ուղեգրությունները, որոնք նախորդ դարերի նույնատիպ երկերի համեմատությամբ քանակով շատ ավելի են: Սրանց հեղինակները, փոքր բացառությամբ, եղել են ուխտավոր քահանաներ, որոնք հաճախ օրագրի ձևով, գրի են առել ուխտագնացության ընթացքում տեղի ունեցած դեպքերը, իրենց անձնական կյանքի որոշ հանգամանքները ու նկարագրել այցելած վայրերը: Չնայած XLI—XVI դդ. հեղինակների նման նրանք ևս նպաստակ են ունեցել խոսել հատկապես սրբավայրերի ու դրանց կրոնական նշանակության մասին, սակայն փաստորեն չեն մնացել այդ անձուկ սահմաններում և իրենց ճանապարհորդությունները ներկայացրել են ավելի բազմակողմանի ու հանգամանալից: Այդ նկարագրությունների մեջ, ի տարբերություն անցյալ դարերի ուղեգրությունների, բնաշխարհագրական փաստերին զուգահեռ էական տեղ է հատկացվում նաև այցելած վայրերի տնտեսական վիճակին, սոցիալական ու կենցաղային նշանակություն ունեցող երևույթներին: Ուղեգրություններում մեծ մասամբ տեղեկություններ են տրվում, թե ինչով է հարուստ կամ նշանավոր այս կամ այն բնակավայրը, ինչ բարիքներ է արտահանում, որ արհեստներն են զարգացած, ինչ կարելի է գտնել շուկաներում ու խանութներում, ինչ արժե յուրաքանչյուր ապրանքը և այլն: Նկարագրվում են մարդկանց կենցաղն ու ապրուստը, հագուստն ու զարդարանքները, հավատալիքներն ու սովորությունները: Նույնիսկ նշանավոր վանքերին ու եկեղեցիներին նվիրված հատվածներում շեշտը դրվում է դրանց հարստության, արտաքին փայլի, հոգևոր դասի հանդերձանքի և արարողությունների ժամանակ օգտագործվող սպասքի ճոխության վրա: Այս առումով հայ ուղեգրության դասական նմուշներից է հաշատուր Թոխաթցու (Եվդոկացու) «Պատմութիւն Վենետիկ քաղաքին» շահածո երկը՝ (գրված՝ 1614 թ.), որի մեջ հեղինակը մանրամասն պատմում է Միջերկրական ծովով կատարած իր ճանապարհորդության և Վենետիկից ստացած տպավորությունների մասին: Այն, որ Ասիայից Եվրոպա ընկած ո՛չ շատ կրթված մի քահանայի շլացրել են Վենետիկի դիրքն ու գեղեցկությունը, փողոցներն ու հրապարակները, պալատները, եկեղեցիներն ու այլևայլ հույակապ կառույցները, միանգամայն քնական է: Սակայն, ուշագրավն այն է, որ նա ամենից առաջ հիացմունքով է արձանագրում Վերածնունդի դարաշրջանի ծաղկող Վենետիկի խանութների, դրանցում վաճառվող պերճանքի առարկաների փայլն ու ճոխությունը, քնակարանների շքեղությունն ու նիստուկացի վայելչությունը, այն, որ վենետիկցիները հատուկ խնամքով են վերաբերվում իրենց առողջությանն ու կենցաղին:

Տուն ու դարպաս խիստ գեղեցիկ,  
Թագաւորաց վայել է նա,  
Գեղեցկաշէն թաւան նստին,  
Ոսկեջրով նա ծածկեալ է,  
Սահլեր, գոյալ՝ արծաթ, ոսկի

1 4. Մելիք-Օհանջանյանը շահածո այս գործը հրատարակել է «Պատմութիւն Փարէզ և Վէնայի» երկի հետ («Պատմութիւն Փարէզ և Վէնայի», Երևան, 1966):

Եվ ամենայն ինչս այսպէս է:  
 Տուն ու խանութ մալով ի լի,  
 Պակասութիւն հեշ քաշեր չէ:  
 Հարիւր տարոյ անցեալ մարդիկ  
 Հենց գիտենաս կտրիճ է նա:  
 Հաց և գինի շափով ուտեն  
 Եւ զսահաթ շանցնեն նոցա,  
 Քնով մարմինն դարմանեն,  
 Զաշն ի կոզլուկէն չի զատեն:  
 Ամենեկին ջուր չի խմեն,  
 Կու ծիծաղեն ով որ խմէ,  
 Մեզ անասուն անբան ասեն,  
 Թէ՛ շահն իւրեանց ոչ գիտենան<sup>2</sup>:

Այս բոլորից հետո է միայն, որ Խաչատուր Թոխաթցու ուղադրութիւնը պարզում է ս. Մարկոսի հայտնի տաճարը՝ այնտեղ կատարվող արարողութիւններով, հատկապէս Պենտեկոստեի (Բարիկենդանի) ուխտի ժամանակ: Բայց նույնիսկ այս դեպքում նա ավելի շատ խոսում է երևութիւնների նյութական նշանակութեան, քան ծիսական-կրօնական հանգամանքների մասին: Օրինակ՝ մանրամասն անդրադառնում է արարողութեան ժամանակ գործածվող սպասքին, հիշատակում արարողութեանը մասնակցող հոգևորականների թիվը, նրանց թափորի շքեղութիւնը, տոնակատարութեան ժամանակ վանքի ստացած եկամուտները և այլն:

Դարձեալ յատուրս Պենտէկոստին,  
 Մեծ ուխտ՝մ արին, որ ես տեսայ,  
 Անդին ակունք գունս ի գունաց  
 Դրին սուրբ սեղանի վերայ...  
 Նայ մարդաշափ ոսկի խաչեր,  
 Ոսկի շուրջաք թև չի քաշեր,  
 Խորհրդանոց և սուրբ ըսկիհք՝  
 Խտտի աչք նայողին ի նա:  
 Զարծաթն անարգ հաշուեն նոքա,  
 Ի լուր օրերն պետք կու գայ,  
 Կանթեղք հարիւր և երկու հարիւր,  
 Ամէն մէկն լիտր մի կու գայ:  
 Սուրբ սեղանին շրջապատին  
 Ոսկիազօծ տախտակներ կայ,  
 Ներքո, վերս վատեալ գնա,  
 Ոսկով գործած դումաշներ կայ<sup>3</sup>:

Նույն հիացմունքով է նա նկարագրում ս. Մարկոսի տաճարի հրապարակի տոնավաճառը («աշխարհաժողովը»)։ այս դեպքում էլ նրան հետաքրքրողն ավելի շատ առևտրի ծավալն է, հրապարակում բացված բազմաթիվ խանութներում վաճառվող արդուզարդերը, թանկագին քարերը, իրենց խեցիների մեջ ցուցադրվող մարգարիտները և այլն: Հայ քահանայի մտքովն անգամ չի անցնում դուտապարտել Վենետիկի հոգևոր հայրերին՝ ս. Մարկոսի տաճարի հրապարակը վայելքի ու պերճանքի առարկաների առուծախի կենտրոն դարձնելու ու դրա եկամուտներից օգտվելու համար:

XVII դ. մեկ այլ ճանապարհորդի՝ Մինաս Գրչի, անխորագիր «Մի ի թուղցն հազարի» ակավածքով, 1634 թ. գրված կարճատև շափածո ուղեգրական երկի

<sup>2</sup> «Պատմութիւն Փարէզ և Վէնայի», էջ 279—280:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 265—266:

մեջ՝ նկարագրվում է հեղինակի ու նրա ընկերների ճանապարհորդությունը եվրոպական երկրներում: Այստեղ ևս նկատվում է նույն առանձնատկությունը, թեև արտահայտված ավելի աղոտ գծերով: Օրինակ՝ ի թիվս այլ նկարագրությունների, նա խոսում է նաև Բելգրադ քաղաքի հարստության ու զրան հակառակ՝ բաղձաթիվ տնանկների թշվառության մասին:

Սոցիալ-տնտեսական կյանքի նկատմամբ հեղինակների հետաքրքրությունն ավելի մեծ չափերով դրսևորվում է XVII դ. արձակ ուղեգրություններում: Այս առումով հետաքրքիր օրինակ է Հովհաննես Թութունջի վարդապետի

«Պատմութիւն Հապաղստան գնալոյ և գալոյ ճանապարհին, ի թուին Քսի 1678-ին» վերնագրով երկը<sup>4</sup>, որի հեղինակը շափազանց ուշադիր է իր այցելած երկրի՝ Հաբեշստանի, բուսական ու կենդանական աշխարհի, մարդկանց հագուստի, արդուզարդի, կենցաղի հանդեպ: Դրան հակառակ հոգևոր կյանքի նկարագրությունները հպանցիկ են: Ահա թե ինչպիսի գծերով է նա ներկայացնում Հաբեշստանի բնակիչների կյանքը. «Եւ այս 30 ատուր ճանապարհի կերպ-կերպ մարդիկ գոն, որ ոչ վարել ունին և ոչ ցանել, այլ միայն զձուկ և ամենայն ազգ գազան և եաղի տեղ մարդոյ միս ուտեն: Եւ մարդիկ երկրին խիստ կարճ են և հաստ»<sup>5</sup>: Իսկ բուն երկրի մասին գրում է. «Եւ երկիրն ամենայն յոյժ է բարությամբ լի և զանազան պտղովք և միշտ կանանչ է ի Դ եղանակն և ջրավետ, և մարդիկ ամենքեան են մերկ և բոպիկ, զատ ի մեծամեծացն, որ մին Ֆաթալով ծածկեն, և այս 6 թագաւորութիւնս Հապաղին և մին թագաւորութիւն Սընարին, յկայ կոյր, կազ, խոցոտ և այլ այլպիսի ցաւ, և ձիանք երկրին են կարի մազողք և մարդիկքն քան զձիանքն»<sup>6</sup>: Նա չի մոռանում օգտակար հանածոները, հազվագյուտ պտուղները, առևտրի եղանակները, թագավորի հանդիսավոր ճաշկերույթն ու շքերթը: Տալիս է նաև բազմաթիվ արժեքավոր աշխարհագրական տեղեկություններ, որոնց մեջ հատկապես հետաքրքիր է նեղոսի ալունքների նկարագրությունը:

Աշխարհիկ կյանքին նախապատվություն տալու ինքնատիպ դրսևորում ենք նկատում նաև XVII դ. մեկ այլ ճանապարհորդի՝ հայազգի կաթողիկ քահանա Օզոստիանոս Բաշեցու «Ճանապարհորդութիւն յՍվրոպայ» երկում<sup>7</sup>: Հեղինակը, շահ Արասի բռնագաղթից մի կերպ ազատվելով և վախենալով նոր հալածանքներից, ծառայության է մտնում պարսից շահի Ֆրանսիացի թարգմանչի մոտ, նրա օգնությամբ դուրս գալիս Նախիջևանից և 1609—1613 թթ. ճանապարհորդում Սվրոպայի մի շարք երկրներում: Թեև Օզոստիանոս Բաշեցուն ավելի շատ զբաղեցնում են կրոնա-քաղաքական հարցերն ու դրանց հետ կապված պատմական իրադարձությունները, սակայն նա ևս անուշադիր չէ իր այցելած վայրերի տնտեսական վիճակի, կենցաղի և մշակութային փաստերի հանդեպ: Օրինակ՝ նա նկարագրում է Մադրիդի մոտ գտնվող Սկուռելալ վանքի գրադարանը. «Մէջն գրքատուն կայ, որ Մ գազ երկայնութիւն է և Ին գազ լայնութիւն է, գրքով լի, զամենայն ոսկով կազմած և ամենայն ցեղ լեղուէ ի մէջն կայ»<sup>8</sup>: Ուշագրով են նաև Հոմմի ս. Պողոս-Պետրոս եկեղեցու և Ջենովա քաղաքի նկարագրությունները: Հիշյալ եկեղեցու մասին գրում է. «Ետիստ մեծ և զարմանալի, որ ի հետ ՃՄ մարդ մէջն մտնու՝ դեռ տեղ շատ կու մնայ: Բճ գունբէթ կայ վերէն և բազում կամար, ամենայն ոսկիակազմ, մարմառիայ և անգին քարով... Եւ անշափ է բարձրութիւնն, որ մեծ գունբէթին գլխին խաչին

<sup>4</sup> Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 7273, Թ. 155ա—157ա:

<sup>5</sup> ՏԵՄ Ա. Ալպոյաէյան, Հայ եպիսկոպոսի մը առաքելութիւնը ի Հապէշստան ժէ դարուն, Գահիրե, 1946, էջ 3—11:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 3:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 7—8:

<sup>8</sup> ՏԵՄ Բ. Պատկանյան, Նշխարք մատենագրութեան Հայոց, ս. Պետերբուրգ, 1884, էջ 5—23:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 12:

տակին խնճորումն ժԲ մարդ կու սագի, տակէն հետ մէկ խնճորի շափ կերելայ...»<sup>10</sup>: Իսկ Ջինուվայի մասին կարդում ենք. «Այս Ջինուլայ քաղաքս խիստ հարուստ այ և սիրուն և խիստ ամուր, լաւ նաւերաց բանդար այ, և անթիւ եկեղեցիք և վանքեր կայ ի մէջն, ամենեքեան մարմառիայ և ոսկիակազմ...»<sup>11</sup>: Նա ավելի մանրամասն նկարագրում է Հռոմի հիվանդանոցները, ընկեցիկների մանկատները, պանդուխտների համար կառուցված ապաստարանները՝ հիացմունքով նշելով դրանցում տիրող կարգուկանոնն ու մաքրութունը:

Քնն ավելի սակավ, բայց համանման նկարագրութունների հանդիպում ենք նաև Դավիթ Երեց Եվդոկացու «Ուղեգրութիւն Կ. Պոլսից մինչև Հոմա»<sup>12</sup> և «Ուղեգրութիւն Փիրզատէի Ղափանեցոյ»<sup>13</sup> երկերում:

Նույնը, ավելի ընդգծված, երևում է Սիմեոն Լեհացու ուղեգրության մեջ<sup>14</sup>, որն այս ժանրի ամենաարժեքավոր երկերից մեկն է: Այստեղ նկարագրված է հեղինակի ճանապարհորդութունը Մերձավոր Արևելքի ու Եվրոպայի մի շարք երկրներում, 1608—1618 թվականներին: Հավատարեցյալ ուխտավոր Սիմեոն Լեհացին ևս առաջին հերթին նկատում է իր անցած ճանապարհին եղած վանքերն ու եկեղեցիները, սակայն նույնիսկ այս հատվածներում նա հանգամանալից նկարագրում է աշխարհիկ նշանակութուն ունեցող փաստեր և երևույթներ: Օրինակ, հեղինակը մեծ սիրով է անդրադառնում վանքերի ու եկեղեցիների ճարտարապետութանը, դրանց կամարներին, զմբեթներին, քանդակներին ու նկարներին: Հատուկ նշում է վանքերի առատ եկամուտները, վանականների բարեկեցիկ կյանքը և այլն: Քաղաքները նկարագրելիս առաջին հերթին խոսում է շուկաների, վաճառատների, խանութների հարստության, ապրանքների առատության, քաղաքացիների նիստուկացի մասին: Օրինակ՝ Կ. Պոլսի ս. Սոփիայի տաճարը նկարագրելուց հետո Լեհացին անդրադառնում է հին ու նոր «պէղէստաններին», որոնք ըստ նրա նկարագրության, եղել են ոչ միայն կտորեղենի, այլև առհասարակ արդյունաբերական ապրանքների հարուստ շուկաներ: Սիմեոն Լեհացին ցավով ու զայրույթով է խոսում գերեզմանատեղիների մասին: Մեկ առ մեկ ցույց է տալիս հրապարակները, դատարանը, իջևանատները, հատուկ ենթագլուխներ է նվիրում կամուրջներին, բնակչության էթնիկական կազմին, բարեգործական և այլ հաստատություններին, մի խոսքով՝ աշխարհիկ կյանքի բազմաթիվ ու բազմապիսի կողմերին՝ չմոռանալով հիշատակել նաև քրիստոնեական եկեղեցիները պղծելու տաճիկների սովորությունը: Ընդհանուր առմամբ հեղինակն իր պատմությունն անում է մերթ բավականութամբ, մերթ տրտմութամբ, շթաքցնելով ո՛չ ցավը, ո՛չ էլ ստացած հաճույքը: Ահա թե ինչ գույներով է նկարագրում այսպես կոչված «Նոր պէղէստանը»՝ «Նախ ի նորն մտաք, բայց աչք հազար պիտէր, որ տեսանէր և վայելէր զեկեղեցիներն կրմանչից և գանձուց, ոսկոյն և արծաթին և մեծագին ղիպակնուն, ազգ և ազգ սուլահուն, անգին վահանից և պողվատ թրից, ակամբ ընդելուզած խանչարնին, ազնիւ աղեղանց, զուտր ոսկով կամ ճօհար կոթով դանկնուն, թող զսէրասէրքն աթլազն, մախմուրն, քեամխան, խութնիքն, ազգի-ազգի ալաճա դաֆդանի, սօֆեր, եղմուրլուխնին, խըյմաթի քարեր, մեծամեծ մարգարիտք, ակունք պատմականք և այլ բազում անտես և անգիւտ դօհվանի, որ յաշխարհս ոչ գտանի, անդ լի և առատ գտանի և ծախի: ...Այլև զմրուխտք, լալ հաւկթաշափ և ալմազէ գէթրինի, գաւաթնի և չի գիտէ մարդ զորն գնէ կամ յորն հալի»<sup>15</sup>:

Մանրամասն խոսելով սուլթանի պալատի շքեղության մասին, Լեհացին նկարագրում է նաև գահակալի հանդիսավոր լույն, որը հիշեցնում է Հնդկաստանի թագավորի հանդիսավոր շքերթի նկարագրությունը ուսու ճանապարհորդ

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 17:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 15:

<sup>12</sup> Տե՛ս «Բազմավէպ», 1937, էջ 16—17:

<sup>13</sup> Նույն տեղում, 1882, էջ 317—318:

<sup>14</sup> Սիմեոն դպրի Լեհացույ ուղեգրութիւն, Վիէննա, 1930:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 17—18:

Աֆանասի Նիկիտինի ուղեգրության մեջ<sup>16</sup>, Գալով Հոռոմ, Սիմեոն Լեհացին դարձյալ առաջին հերթին նկատում է եկեղեցիների փայլն ու շքեղությունը և ապա միայն տեղեկություններ տալիս կաթոլիկական կրոնի տարբեր միությունների մասին: Նա շատ հանգամանորեն է նկարագրում հիվանդանոցները, դպրոցները, աղբյուրները, ջրավազանները և այլ հիշարժան վայրեր: Նրան հիացնում ու զարմացնում են Հոռոմի պապի ամառանոցն ու այգին՝ բազմապիսի շատրվաններով, որոնք մերթ դազարում, մերթ կրկին գործի են դրվում հատուկ սարքերի միջոցով. «Եւ դրախտն մտեալ տեսաք բազմադիմի կերպս և պատկերս և շինուածս քարէ, որ ամենէն ջուր բխէր: Այլ և կային ազբիւրք բարէհամբ և շատրվանք զարմանաշէնք, որ վազէին ջուրքն երկու, երեք մարդապոյ բարձր... Եւ այլ շատրվան մի կայր, որ վէրնն շինած էր իսպիտակ մեռմերէ կոյս աղշիկ մի գեղեցիկ, որ ունէր ի ձեռին հայելի մի մեծ և հայէր ի նա իբրև զկենդանի, և մեք մերձ եղաք պշուցեալ հայէաք, յանկարծակի ի բաց տարեալ զհայելին և բերանոյն ջուր թափեաց ի վերայ մեր, որ փախաք: ...Եւ զայս ամենայն շինած էր վասն ծիծաղելոյ և մասխարայի, զի և տեսողքն ուրախութեամբ զուարճացին, զի սոքոք իմաստունք մխիթարին և տխմարքն խաբին»<sup>17</sup>:

Ինչպես տեսնում ենք, քահանա Սիմեոն Լեհացին դվարձության պարագաներով հարուստ այգին դրախտ է անվանում, մի բան, որ ներքի չէր պնդել վաղկրոնական ասկետական մտայնության ժամանակներում: Նա նման հատվածներ ունի նվիրված նաև Ֆլորենցիային, Թոխաթին, Սեբաստիային, Ամիդիին, Ալեքսանդրիային, Կահիրեին, Հալեպին և այլն: Այդպիսի հատվածները ամենաբանաստեղծականներն են ուղեգրության մեջ և վկայում են այն սեղաշարժերի մասին, որ ժամանակի նոր հարաբերությունների հետևանքով կատարվել էին անգամ հոգևորականների մտայնության մեջ:

Իհարկե, ժամանակի ոչ բոլոր հեղինակներն են կարողացել հասնել այդ բարձրության: Հաճախ աշխարհիկ մոտիվները երկերի մեջ մտնում են ենթագիտակցորեն, բայց կարևորն այն է, որ տվյալ երևույթն առավել կամ պակաս շահերով առկա է այս շրջանի համարյա բոլոր ուղեգրություններում: Նման նրկարագրությունների հանդիպում ենք նաև այլազգի, օրինակ՝ ռուս ճանապարհորդների ուղեգրությունների մեջ, սակայն դրանցում այլ են նման հատվածների դերն ու նշանակությունը: Օրինակ, եթե Աֆանասի Նիկիտինը կամ Ֆեդոտ Կոտովը<sup>18</sup> նույնպես նկարագրել են Հնդկաստանի կամ Պարսկաստանի բնակավայրերը, դրանց տեղագրությունը, հարստությունը, շուկաներում վաճառվող ապրանքները, արհեստագործական և գյուղատնտեսական արտադրանքի տեսակները, հանածոները, ինչպես նաև բնակիչների նիստուկացը, կենցաղն ու հավատալիքները, ապա դա միանգամայն օրինալափ է, որովհետև երկու ճանապարհորդներն էլ վաճառականներ են և օտար երկիր են մեկնել պարզելու, թե առևտրի ինչպիսի հնարավորություններ կան, ինչ կարելի է վաճառել և ինչ գնել տվյալ երկրում: Այսինքն և՛ Աֆանասի Նիկիտինը, և՛ Ֆեդոտ Կոտովը իրենց այցելած երկրները դիտել են որպես արտահանության ու ներմուծման շուկաներ<sup>19</sup>: Այս և այլազգի բազմաթիվ ուրիշ ճանապարհորդների ուղեգրություններում նման նկարագրությունների առկայությունը բացատրվում է հեղինակների սոցիալական կեցության մեջ, դասային աշխարհայացքով:

Բայց չէ՞ որ վաճառականներ չեն եղել XVII դ. հայ ճանապարհորդները, այլ մեծ մասամբ ուխտի ելած հոգևորականներ, որոնք առևտրական հետաքրքրություններ չեն ունեցել: Այդ դեպքում ինչով բացատրելի չե՞րկարայինի» այդպիսի առատ ու հիացական նկարագրությունները նրանց երկերում: Հարցը կպարզվի, եթե մի հայացք նետենք առհասարակ XVII դ. գրականության և մասնավորապես դրա ամենածանրակշիռ մասի՝ բանաստեղծության վրա, որը

<sup>16</sup> Տե՛ս «Хождение за три моря Афанасия Никитина», М.—Л., 1948, с. 24—25.

<sup>17</sup> «Սիմեոն դարձ Լեհացոյ ուղեգրութիւն», էջ 150, 152:

<sup>18</sup> «Хождение купца Федота Котова в Персию», М., 1958, с. 72—82.

<sup>19</sup> В. П. Адрианова-Перетц, Афанасий Никитин—путешественник—писатель (տե՛ս «Хождение за три моря» գրքի հավելված, էջ 123):

շատ է տարբերվում նախորդ ժամանակաշրջանի բանաստեղծությունից: Փոփոխություններ են տեղի ունեցել նրա ներքին էության մեջ՝ պայմանավորված ժամանակի հասարակական ու սոցիալական հարաբերություններով, կյանքի աշխարհականացման հետևանքով մարդկանց մտածողության ու հոգեբանության մեջ կատարված տեղաշարժերով<sup>20</sup>: Այս տեղաշարժերն են արտահայտված նաև XVII դարի ուղեգրություններում, որոնց հեղինակները ևս իրենց հայացքներով ու հոգեբանությամբ արդեն զգալիորեն հեռացել են XII—XV դդ. բանաստեղծներից ու ճանապարհորդություն կատարած ուխտավոր-կրոնավորներից: Կյանքի աշխարհականացումը անկախ նրանց ցանկությունից, զգալի փոփոխություններ է առաջացրել այս ճանապարհորդների աշխարհընկալման, աշխարհայեցողության մեջ: Սրանով պիտի բացատրել, որ շնայած նրանք աչքաթող չեն անում իրենց այցելած սրբավայրերը և սիրով են պատմում դրանց հետ առնչվող լեգենդներն ու ավետարանական գրույցները, թեպետ արգահատանքով են հիշում քրիստոնեական կրոնից զատված ազանդներն ու ատելություններն ու հալածանքները, այնուամենայնիվ իրենց աշխարհայացքով նրանք շատ են տարբերվում XII—XV դդ. հոգևորական ճանապարհորդներից: Աշխարհայացքում կատարված այս փոփոխությամբ պիտի բացատրել ավելի բևեռված հետաքրքրությունը կյանքի սոցիալ-տնտեսական երևույթների հանդեպ և դրա անսքող դրսևորումը ուղեգրություններում: Ո՛չ խաչատուր թոխաթցին, ո՛չ Սիմոն Լեհացին, ո՛չ Հովհաննես Թութունջին, ո՛չ Մինաս Գրիչը և ո՛չ էլ Օղոստիանոս Բաջեցին կյանքի ճոխությունն ու մարմնական վայելքի համար ստեղծված իրերն ու առարկաները նկարագրելիս չեն էլ մտածում «մեղքի» ու ապաշխարության մասին. նրանց մոտ արդեն հաղթանակել է երկրայինն ու հոգևորը համատեղելու իր ժամանակի համար առաջադիմական մտայնությունը: Սա էլ հենց XVII դարի ուղեգրությունների ամենակարևոր առանձնահատկությունն է:

## ОБ ОДНОЙ ОСОБЕННОСТИ АРМЯНСКИХ ПУТЕВЫХ ЗАМЕТОК XVII ВЕКА

АСМИК СААКЯН

### Резюме

Среди армянских историко-литературных памятников XVII в. своей самобытностью выделяются путевые заметки. Из них следует отметить «Историю города Венеции» Хачатура Тохатеци (Евдокаци), заметки о путешествиях Минаса Грича по Европе и Ованеса Тутунджи — по Абиссинии, «Путешествие в Европу» Огустианоса Баджеди и особенно «Путевые заметки» Симеона Леаци, являющиеся классическим примером подобных произведений.

В этих путевых заметках авторы подробно описывают быт, занятия людей, ремесла, изобилие рынков, ярмарок, красоту улиц, площадей, зданий и обрядных празднеств и т. д. в тех странах, где они побывали. При этом они уделяют меньше внимания религиозным и церковным вопросам.

<sup>20</sup> Մանրամասն տե՛ս տողերիս հեղինակի «Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը» գրքում, Երևան, 1975: